Արձանագրություն հ. 5

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 08.09.23 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 40 անդամներից 27 -ը:

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
2. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ լսեցին կառավարման և գործարարության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի հաղորդումը հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորման արդյունքների վերաբերյալ: Նա ասաց, որ ամբիոնն ունի 3 հայցորդներ՝ Պետրոսյան Սյուզաննա (2-րդ տարի), Հակոբյան Շուլի (1-ին տարի) և Մարգարյան Հայկ (1-ին տարի): Երեքն էլ ատեստավորվել են ամբիոնում: Ամբիոնի որոշումը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին հաստատել կառավարման և գործարարության ամբիոնի որոշումը: Ատեստավորման մասին քաղվածքները՝ ամեն մի ասպիրանտի և հայցորդի համար առանձին, ուղարկվում է ասպիրանտուրայի բաժին, 2-րդ օրինակն էլ պահվում է մեր թղթապանակում:

Ընթացիկ հարցերի շրջանակում լսեցին՝

2023-2024 ուս. տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին հարցը:

Որոշեցին ներքոհիշյալ ուսանողներին երաշխավորել ստանալու անվանական կրթաթոշակ:

1. «Կառավարում» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Վիկտորյա Վահագնի Մաթևոսյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:

2.«Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վահե Զավենի Ասատրյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:

3.«Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողուհի Անի Հովհաննեսի Ծառուկյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

4. «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանող Անգելինա Սերոբի Սարգսյանին երաշխավորել ստանալու Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:

Գիտխորհրդի նախագահ,
տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ. Համբարձումյան